

6. Տիպարանություն

Հաճախորդներից ներգրավված միջոցների հաշվին վարկավորման կիրառությամբ դրամական միջոցների ծագման իրական աղբյուրների քողարկման միջոցով փողերի լվացման սխեմա

1) Սխեմայի նկարագիրը

Այս սխեմայի գործողության մեխանիզմը կայանում է նրանում, որ հաճախորդի կողմից փաստացիորեն տնօրինվող և անհայտ ծագմամբ դրամական միջոցները մեկ կամ մի քանի գործարքով ներարկվում են բանկային համակարգ, որից հետո այդ միջոցների գրավադրմամբ տրամադրվում են վարկեր՝ խնդրո առարկա միջոցների ծագման օրինականությունը երրորդ կողմի մոտ հավաստելու նպատակով:

Այսպես, տեղական բանկի հաճախորդի հաշվին կանխիկ կամ անկանխիկ (արտերկրից փոխանցումների միջոցով) ձևավորվում են միջոցներ, որոնք բանկում թողնվում են հաճախորդի հաշվի մնացորդի կամ ժամկետային ավանդի տեսքով: Որպես միջոցների ծագման օրինականությունը հավաստող փաստաթուղթ կարող են ներկայացվել անշարժ գույքի առուվաճառքի, փոխառության, ֆինանսական օգնության և այլ պայմանագրեր: Հաջորդ քայլով, նշված հաշվի մնացորդի կամ ժամկետային ավանդի ապահովությամբ բանկի կողմից տրամադրվում են վարկեր, որոնք տնօրինվում են ըստ հաճախորդի հանձնարարականների, որպես կանոն, փոխանցվելով արտերկիր (որոշ դեպքերում՝ կանխիկ ելքագրվելով):


Նույն տրամաբանությամբ և հաջորդականությամբ գործարքներ կարող են կատարվել միջբանկային գործառնությունների տեսքով, այսինքն՝ երբ արտասահմանյան բանկը տեղական բանկում ձևավորում է «լորո» թղթակցային հաշվի մնացորդ (ներդնում է ժամկետային ավանդ), որի ապահովությամբ տեղական բանկի հաճախորդ(ներ)ին տրամադրվում են վարկեր և տնօրինվում են վերջիններիս կողմից, որպես կանոն, փոխանցվելով արտերկիր: Ընդ որում, ըստ նշված գործարքների տրամաբանության, տեղական բանկում «լորո» թղթակցային հաշվի մնացորդի (ներդրված ժամկետային ավանդի) գրավադրման փաստը որևէ կերպ չի արտացոլվում արտասահմանյան բանկի ֆինանսական և այլ հաշվետվություններում:

Վերը նկարագրված երկու տարբերակի դեպքում էլ տրամադրված վարկերը որոշ ժամանակ անց մարվում են հաճախորդի հաշվի մնացորդի (ներգրավված ժամկետային ավանդի) հաշվին:

Վերոհիշյալ սխեմաներով իրականացվող գործարքների արդյունքում.

- Տեղական բանկի հաճախորդը երրորդ կողմի, օրինակ՝ օտարերկրյա պետության վերահսկողական մարմինների մոտ հիմնավորում է իր կողմից տնօրինվող միջոցների օրինականությունը՝ դրանք ցույց տալով որպես հայկական բանկից ստացված վարկային միջոցներ, շատ դեպքերում օգտվելով վարկային միջոցներով ֆինանսավորվող գործառնությունների համար նախատեսված արտոնություններից, և
- Արտասահմանյան բանկը լուծում է իր հաճախորդների անուղղակի վարկավորման և/կամ նախկինում ձևավորված անորակ ակտիվների վերաֆինանսավորման/ վերաձևակերպման հետ կապված խնդիրներ:

2) Ստորև սխեմատիկորեն ներկայացվում են նկարագրված տեսակի գործառնությունները.



- ա. Բանկի հաճախորդի կողմից կանխիկ կամ անկանխիկ (արտերկրից փոխանցումների միջոցով) ձևավորվում են միջոցներ՝ հաշվի մնացորդի կամ ժամկետային ավանդի տեսքով,
- բ. Հաշվի մնացորդի կամ ժամկետային ավանդի գրավադրմամբ տրամադրվում են վարկեր,
- գ. Վարկային միջոցները տնօրինվում են ըստ հաճախորդի հանձնարարականների, որպես կանոն, փոխանցվելով արտերկիր (որոշ դեպքերում՝ կանխիկ ելքագրվելով),
- դ. Տրամադրված վարկերը որոշ ժամանակ անց հաճախորդի հաշվի մնացորդի (ներգրավված ժամկետային ավանդի) հաշվին մարվում են:

3) Եզրահանգում

Վերը նշված սխեմայով և քայլերի հաջորդականությամբ կատարվող գործարքներն իրենց մեջ կարող են պարունակել եկամուտների ծագման աղբյուրները, դրանց շարժը կամ իրական պատկանելությունը (վերջնական շահառուներին) թաքցնելու նպատակ:

Նման սխեմայով հատկորոշվող գործառնությունների ուսումնասիրության տեսանկյունից առանձնակի ուշադրության են ենթակա ֆինանսական հաստատության կողմից իրականացվող ավանդների ներգրավման և վարկավորման, այդ թվում՝

դրամական միջոցների և այլ բարձր իրացվելի ակտիվների ապահովվածությանը վարկերի տրամադրման գործառնությունները: